14. Հետեւեաններուն կցեցէ բառ մք, որ նոյն Էսակաց եւ առարկաց արտամին մասը կամ պահառակ նշանակէ:

1. Բնոյզին —, 2. Զուկին —, 3. Կրիստին —, 4. Հացին և նարինչին —, 5. Իշուն —, 6. Սոլին —, 7. Անկովինին և սեպանին —, 8. Գրին —, 9. Գաշոյնին և Թուրին —, 10. Բարձին և վերմակին —, 11. Ակնցին, Ժիախուսին —, 12. Օձին —, 13. Նամակին —, 14. Ջիուն —, 15. Երեսին —, 16. Գլխուն —, 17. Մեռելին —:

5. Առիւծն ու մուկը

1. Մուկերը կը զրօնուն. անոնցմէ մին առիւծին թաթերուն մէջտեղ կը մնայ : 2. Առիւծը կրնար . . . բայց վեհանձնաբար թողուց զայն: 3. Ուրիշ օր մասիւծը ցանցի մէջ կը բռնուի . — տանջանք և մոնչիւնք: 4. Մկնիկն օգնութեան կը համի և կ'ազատէ . . . (ի՞նչպէս): 6. Բարոյական:

6. Մահ Աբելի

1. Ագամ երկու որդի ունէր . . . : Աբել՝ հովիւ և Կայէն՝ երկրագործ: 2. Աբելի զահերն Աստուծոյ համելի էին: 3. Կայէն կը նախանձի և կը սպաննէ եզրայրն: 4. Անէծք Աստուծոյ: 5. Ի՞նչ եղաւ կայէնի վախճանը :

7. Կումը

1. Թագաւոր մը բազմաթիւ հետեւորդներով ոսկերչի մը խանութ կ'երթայ գոհարեղիններ գնելու: Դուրս ելնելու վրայ էր, երբ վաճառականը գալաք կ'իմացնէ անոր թէ հետեւորդներէն մին մատանի մը գողցած է (խուեցուցիվ վաճառականը) 2. Թագաւորը նորէն խանութ կը մտնէ և կը հրամայէ աւազով ի կուժ մը բերել (խուեցուցիվ թագաւորը): 3. Յետոյ իւր հետեւորդները կը հրաւիրէ գալ կարգաւ մկել իրենց ձեռքն աւազին մէջ: (ըսէ՛, ի՞նչո՞ւ այսպէս կ'լնէ): 4. Մատանին կը գտնուի: 5. Բարոյական:

8. Տօնի առթիւ ընորհաւորութիւն առ մեծ հայրն

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Երեք տարի չկայ որ գլորց կ'երթամ . . . : 3. Գիրո քիչ մը խոշոր է, բայց

16. Գոյակաները գտէ՛. (պատասխաներն ամբողջ պարերութիւն պէտք է ըլլան): 1. Ի՞նչ կը կոչուի այն մարդն որ երկիր մը կը կառափարէ: 2. Այն որ գէնը կը կրի, 3. Այն որ բանակի մը կը նրամայէ, 4. Այն որ զօրք կը փարէ, 5. Այն որ մարդ մը կը փարէ, 6. Այն որ պետութեան մը խորհնորդներուն կը մասնացի: 7. Այն որ թագաւորն վերց պետութեան զիստուր պաշտօնն ունի: 8. Այն որ բազարի մը զորձերը կը փարէ, 9. Այն որ գլորց կամ նամրացին շէնք մը փարէ, 10. Այն որ պետութեան մը բով ուրիշ պետութեան մը ներկայացուցին է, 11. Այն որ ուրիշ մը զորձերը կը կասարէ, 12. Այն որ ուրիշ մը պկուած է զործի վրայ բանակցելու համար . . . :

Գ. ՇՐՋԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐ

1. Բարի տղան

1. Բարի տղան առաւոտուն արթնալուն պէս (ի՞նչ կ'լնէ): 2. ի՞նչպէս կ'աղօրէ . . . 3. ի՞նչ կ'լսէ . . . (զրեցի այդ աղօրիլ):

2. Ազահութիւն

1. Ագարակի մէջ ինձորենի մը: 2. Ագարակապանն ամէն տարի բնձայ կը զրիէ: առ տղարակատէրն: 3. Բայց առ գժգոն է (ի՞նչո՞ւ) և իւր այգին փոխադրել կուտայ ծառը որ կը չորնայ . . . (ի՞նչո՞ւ): 4. Զգնում ագարակատիրոջ (խուեցուցիվ զինլի): 5. Բարոյական:

3. Գիւղացին եւ ակնոցը

1. Ծերերն ակնաց կը գործածեն կարգալու համար: Գիւղացին մը ուղելով ակնաց մը գնել (ի՞նչո՞ւ) . . . կ'երթայ . . . (ի՞նչ): 2. Ակնոցավաճառը շատ մը ակնոցներ կը ցուցնէ: Գիւղացին չհաւնիր: 3. Ակնոցավաճառը սրաննեղած՝ կ'ըսէ. «Բարեկամ, գուցէ կարդալ չէք գիտեր»: 5. «Եթէ կարդալ գիտնի . . . »:

4. Վահրամի առաջին նամակն

առ իւր նօրեղբօրդուսրն

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Վահրամի շուէ թէ իւր առաջին նամակն է այս: Հիմն նամակ գրելու համար պէտք եղածներն ունի . . . : 3. Կը յիշէ այն պատուէրներն զրու երեկ տուաւ գասաւուն նամակադրութեան մասին: 4. Վահրամ կը մասձէ թէ նամակ մը ի՞նչպէս վերջացնելու է: Իւր չօրեղբօր աղջկան յարմար ձեւը կը գտնէ վերջապէս: Ստորագրութիւն: 5. Հասցէ:

15. Սա խօսերը ամբողջացէ՞: 1. Աշխատէ եւ խնայէ երիտասարդութեան տան, որպէս զի . . . 2. Անձանոթ բոյս մը բերանդ տանելու չես, զուցէ . . . 3. Խան ուրիշներուն համեմի եղիր, որպէս զի . . . 4. Գժրազները մը ծառերը, զուցէ օր մը . . . 5. Սու ներմասկեցները տար փաէ եւ մը մողցեր, մինչեւ որ . . . 6. Մրցանակ չկրցայ տանել թէպէտե . . . 7. Մրցանակ չառաւ, անոր համար . . . :

կամաց կամաց պիտի վարժուիմ և գալ տարի 4. Շնորհաւորութիւնք և բարեմաղթութիւնք 5. Վերջաւորութեան ձեւ, ստորագրութիւն : 6. Հասցէ:

9. Անմեղ ստախօսութիւն

1. Կոյր ծերունի մը և իւր թոռնիկը կը մուրան (նկարացրեցի իրենց արգահատելի վիճակը); 2. Օր մը իրենց աղքատիկ ճաշն ընելու համար կը նստին տեղ մը (խօսեցուցի կոյրը); Պատառ մը հաց միայն կար: Մանուկը զայն հաւին կուտայ (ի՞նչ կը խօսակցին): 3. Խորհրդածութիւն մ'ըրէք մանկան այս բարեգործութեան վրայ:

10. Զուրակն ու նպոնը

1. Զութակահար մը նուագահանդէսի մը գացած է.— Ծափահարութիւնք իւր ճարտար նուագածութեան համար: 2. Զութակն ու ճպուը կը վիճարանին իրենց փոխադարձ արժանեաց վրայ: 3 Ճպու ու ջութակ իրենց տեղը կը դրուին և ալ ճայներնին չլսուիր: 4 Բարոյական:

11. Երեք մեծ բժիշկներ

1. Տաղանդաւոր բժիշկ մը մեռնելու վրայ է: Ուրիշ երեք բժիշկներ զինք կը խնամեն (նկարացրեցի այս տեսարանը): 2. Մահամերձը կ'ըսէ թէ իրմէ վերջ երեք մեծ բժիշկ կը թողու (խօսեցուցի զինքը): 3. Դարմանուլբժիշկները կը թախանձեն որ ըսէ անոնց անունները (ինչնո՞ւ): 3. Մահամերձն երեք անուն կուտայ (որո՞նի են):

12. Նամակ առ Ռւսուցիչն

1. Տեղ թուական և վերնագիր: 2. Աշակերտ մը թոյլ տուութիւն կը ինդրէ ուսուցչն յաջորդ երկուշարթի դըպ-

13. Խօսնի ազգու բնոր բառը գրեմ գներուն ենք, ՍԻՐԸ, ՄԻՐԸ:
Խիստարզը — Թոշոն մ'է, իւր տեսքը, կազմուածին համեմատութիւնը, — ու — բացուածը կը զմայլեցնեն զնորդ բնին ալ, կարծես, կը սրանանայ իւր գեղցութեան վրայ: Միբանարգին — փետուրնեն որ — ծաղկներէն զերազանց փայլ մ'ունին, ամէն ասրի զոյներնին կը նետեն և կը թափին — ձան մ'ոնի եւ — կը թաչի: Քնանալոյ համար ծառի վրայ կը թափի կամ ասնիթի վրայ կը կծափի: Հաւոցները շատ անզամ տակն ի վրայ կ'ընէ եւ պարտ զներն անսպաս կը դարձնէ: Էզը չունի արուին — տեսքը մանաւանդ — եւ — տտունը:

րոցէն բացակայ գտնուելու (ցուցիկ պատճառ մը): 3. Իւր փաստերը կը պարզէ (փաստեր զշի): 4. Կը խոստանայ կորսուած ժամանակը շահիւ (ի՞նչպիս): 5. Վերջուորութիւն և ստորագրութիւն: 6. Հասցէ:

13. Զրիեղեղ

1. Մարդիկ առաքինութենէ կը հեռանային : 2. Աստուած որոշեց զանոնք չնշել: 3. Նոյ միայն կը մնար Աստուծոյ հաւատարիմ (ի՞նչ կ'ընէր): 4. Աստուած անոր յայտնեց իւր միտքն և պատուիրեց որ . . . : 5. Պատուհասը կը սկսի երկինքէն հեղեղներ . . . : (ի՞նչ կ'ըլլան մարդիկ եւ կենդանիի): 6. Զուրերը կը սկսին քաշուիլ: Նոյ կ'արձակէ ագռաւ մը . . . յետոյ աղաւնի մը . . . : 7. Նոյ կ'ենէ տապանէն և . . . (ի՞նչ կ'ընէ): 8. Ծիածան:

14. ՄՏի արքնութիւն

1. Սենեկին մէջ, բաց պատուհանին մօտ, Մարիամ կ'աշխատի: Առջեւը կատուն նստած՝ կը լիզէ իւր ձագը: 2. Յանկարծ ձնձլուկ մը ներս կը մանէ (նկարացրեցի իւր ահն ու դողը): Կատուն կը ցատքէ ձնձլուկին վրայ: 3. Մարիամ իսկոյն կատուին ձագը կը բռնէ և այնպէս կը ձեւացնէ թէ պատուհանէն վար նետել կ'ուզէ: Այն ատեն կատուն թողլ կուտայ ձնձլիկիր: 4. Մարիամ կը բռնէ զայն և կը թողու որ աղատ թռչի:

15. Կրկնակ խաչ

1. Դեռահասակ սպասաւոր մը, Պետրոս, շատ անգամ իւր տիրոջ կողմէ պտուղ կամ երէ կը բերէր հարուստ՝ բայց կծծի պարոնի մը: 2. Օր մը գարձեալ Պետրոս նապաստակ մ'ընծայ կը բերէ, անքաղաքավար կերպով: 3. Պարոնը կը բացատրէ թէ ի՞նչպէս վարուելու էր: 4. Պետրոս, թիկնաթոռին վրայ բազմած, այնպէս կը ձեւացնէ թէ պարզեւ կուտայ անոր: (Այս ամենը խօսակցութեան ձեւով նկարացրեցի):

16. ԳՏի սա մասնիկներով վերջացող բառեր:
1. եղ, 2. ուտ, 3. ոտ, 4. կոտ, 5. ենի, 6. ի.

16. Կաղանդի առթիւ նամակ առ կնքահայրն

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Այսպիսի հանդիսաւոր օր մը ձեր կնքահօր չնորհաւորական նամակ գրել պարտք կը համարիք և նամակագրութեան գրքէն այնպիսի նամակ մ'օրինակելով զրկել փորձուեցաք . . . 3. Սակայն նախամեծար կը սեպէք օր գաղափարները ձեզմէ բղսին: Նոր տարւոյ առթիւ չնորհաւորութիւններ: 4. Ի՞նչ գրելու էք ձեր ծնողաց կողմէ: 5. Վերջաւորութիւն և ստորագրութիւն: 6. Հասցէ:

17. Սկիւն ու լնձառիւծը

1. Սկիւն մը ծառին վրայէն կ'իյնայ ընձառիւծի մը թաթերուն մէջտեղ: Ընձառիւծը կ'ըսէ անոր: «Կը չնորհեմ կեանքդ եթէ ըսես թէ ինչո՞ւ այդքան զուարթ ես»: 2. Սկիւնը կը խոստանայ պատասխանել եթէ ընձառիւծը թոյլ տայ օր ծառին վրայ ելնէ (խօսեցուցէ զիրենի) 3. «Չուարթ: Եմ, վասն զի խիզմա հանդարտ է» (ընդլայնեցէ այս խօսքը): Ընդհակառակն ընձառիւծը տխուր է վասնզի . . . : 4. Բարյական . . . :

18. Աջ ու ձախ ձեռքերը

1. Աջ ձեռքն հպարտութեամբ կը թուէ ծառայութիւններն զօրս կը մատուցանէ մարդուն, եւ կը մեղադրէ ծախձեռքին անգործութիւնը: 2. Զախն ինքզինք պաշտպանելով կ'ըսէ թէ մարդիկ քիչ կրթութիւն կուտան իրեն եւ թէ, այսու հանդերձ, ի՞նքն ալ կրցածին չափ օգուտներ կ'ընծայէ . . . : 3. Կ'եղրակացնէ կոչում ընելով միաբանութեան ոգւոյն:

19. Բարելոնի աշարակը

1. Նոյի երեք որդիներն: Անոնց սերունդները կը բազմանան և կը ցրուին: 2. Իրարմէ բաժնուելէ առաջ, կ'ուզեն

20. Ածականները վերացեալ անուան փոխեցէ. ձմարիտ, բարի, չար, տղեղ, զեղեցիկ, ազնիւ, թարմ, պարզ, սպիտակ, ծաղրածու, տար, համակիր, անուշ, հետաքրիթ, անզութ, թթու, թանձր, զուարթ, զործունեայ, բարձր:

աշտարակ մը չինել որուն ծայրը . . . 3. Մկան հոկայ ձեռնարկն . . . 4. Աստուծոյ պատիթը, լեզուներու խառնակութիւնը:

20. Աղջիկ մ'իւր եղբօր (նամակ)

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Զմեռը կը մօտենայ և Զարուհի կը ցաւի եղբօրը վրայ օր դպրոցին մէջ կը մսի գուցէ: 3. Կը ծանուցանէ թէ չորս զոյգ բրդէ գուլպայ կը զրկէ: 4. Կը խնդրէ եղբօրմէն յիշել քայրն, երբ գուլպայներն հագնի: 5. Կը յանձնարարէ սր երբ մաշին, զանոնք իրեն վերադարձնէ ծակերը լեցնելու համար: 6. Գորովալից վերջաւորութիւն և սորագրութիւն: 7. Հասցէ:

21. Գանձանակը

1. Փոքրիկ Գէորգ բարի և աշխատասէր էր: Հայրն ամէն շարաթ քառասուն վարա կուտար անոր: Գէորգ խնայասէր էր . . . : 2. Տարւոյն վերջը կը բանայ իւր գանձանակն, յուսալով անոր մէջ գտնել . . . : 3. Զարմանալի բան, մէջը հարիւր գահեկան կար . . . : Ծնողըն, առանց բան մ'ըսելու, խնայած ստակին վրայ . . . գահեկան աւելցուցեր էին . . . : 4. Գէորգ նոյն գումարով . . . :

22. Ամելյուլը

1. Սանդուղի մը վերի աստիճանները արհամարհանքով կը խօսին ստորին աստիճաններուն հետ (խօսեցուցէ): 2. Խելացի մէկը վեր ի վայր կը դարձունէ սանդուղը . . . : Հետեւանք . . . : 3. Մարդկային կեանքի մէջ ալ նոյնը կը պատահի շատ անգամ: Երջանիկ և գժբաղդ անձեր — հարուստ և աղքատ . . . : 4. Բարյական:

20. Սա խօսենք ամբողջացու եւկրողական նախադասութիւններով: 1. Զուրն որ . . . ժայռը կը փորէ: 2. Այն որ . . . հրաշալի բաներ կը գործէ: 3. Մի մակրամար այն անձին հետ զօր . . . : 4. Աւուննը և զիտութիւն այնպիսի հարատութիւններ են զօրս . . . : 5. Մեր ճշմարիտ բարձկամբերն անոնք են որ . . . : 6. Նա որ չփառեր հրամայել . . . : 7. Աստղերն որ . . . մեզ կը պատմն Աստուծոյ փառը:

23. Երկու մուրացկաններ

1. Գարուն է . . . (ըսկէ թէ ի՞նչ կը պատահի զարունը): Ճամբռու մը եղրը կոյր ծերունի մը կը մուրայ: 2. Ուրիշ մուրացկան մը որ կոյր չէ անոր մօտէն կ'անցնի: Ինք կարող է բնութեան գեղեցկութիւնը տեսնել եւ վայելել: 3. Գթալով կոյրին որ . . . , կը հանէ անոր կուտայ տառը փարան զոր քիչ մ'առաջ իրեն տուեր էին:

24. Ներսէս առ Խորէն (նամակ)

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Ներսէս իւր զմելինը կորսնցուցեր է: 3. Լաւ զմելիններ քաղաքը կը դանուին: 4. Կը խնդրէ Խորէնէն հատ մը գնել: Ուզած զմելինը կը նկարագրէ: 5. Խորէն նամակարերին հետ պիսի զրկէ զմելինը: 6. Շնորհակալութիւն և բարեկամական զգացումներ: 7. Հասցէ:

25. Գէց օր մը

1. Դպրոց երթալու վայրկենին, Յովհաննէս, որ ծոյլ տղայ մ'է, կ'ըսէ թէ հիւանդ է . . . : Մայրը կը թոյլաւարէ դպրոց չերթալ և պառկիլ: 2. Նախաճաշի ժամուն Յովհաննէս շատ կը փափաքի անկողնէն ելնել (ի՞նչո՞ւ). բայց մայրը խոհեմութիւն սեպեց թոյլ չտալ: 3. Ժամը տասն է. Յովհաննէս ձանձրացած՝ աալոկացած է (ի՞նչո՞ւ): 4. Մայրը դեղ կը բերէ. Յովհաննէս կը խոստովանի թէ սուտ է: Դուք առ Յովհաննեսին պէս ընել կուզբ:

26. Աբրահամին զնիլ

1. Սատուած կ'ուզէ փորձել Աբրահամի հնազանդութիւնը և կը պատուիրէ . . . (ի՞նչ): 2. Հին գարերուն զոհերը: 3. Աբրահամ առաւ իսահակն և ողջակէզին համար փայտ: Լեռնէն վեր կ'ելնեն (խօսեցուցէ զիրելիք): 4. Փայտակոյտ: Հրեշտակին ձայնը: Մացառէն կախուած խոյը:

27. Գոյականները գտէք. 1. Քիմստոննեայները կ'աղօթեն . . . մէջ, բողոքականները . . . մէջ, հրեաները . . . մէջ: 2. Հին գարբու կուազատները կ'աղօթեն . . . մէջ: 3. Բժիշկ մը որ ակուայ կը բռնէ, կը կոչուի . . . : 4. Մարդ մը դէրը կը բռնէ, կը կոչուի . . . : 5. Մարդ մը որ ներկով ու վրձինով նկար կը շնէ կոստի գրոյ, կը կոչուի . . . : 6. Իսկ այս որ լուսոյ ազդեցութուամբ և մերնախ մը միջոցով պատկեր կը հանէ, կը կոչուի . . . :

27. Շփացած տղան

1. Խոսրով հրաման կը խնդրէ մօրմէն, երթալ Աւագենց տունը Գրիգորին հետ խաղալու (խօսակցութիւն): Մայրը չհաւանիր, վասն զի Գրիգոր շփացած տղայ մ'է: Խոսրով չգիտեր թէ ի՞նչ ըսել է «շփացած», սակայն կը հնազանդի: 2. Երեկոյին, պարտէզը, Խոսրով կը տեսնէ խաղողի երկու ողկոյզ որոց մին սկսած էր փափիլ (նկարագրեցէ): 3. Խոսրով մօրը կ'առաջարկէ փրցնել փափող ողկոյզը: Պատճառը կ'ըսէ: 4. Մայրը, առիթէն օգտուելով՝ կը բացատրէ թէ ի՞նչ է շփացած տղան: Բազդատութիւն տղայոց և ողկոյզ ներու:

28. Նոր սարւոյ առքիւ որդի մը կը գրէ իւր ծնողաց

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Կը փափաքէի ձեզ մօտ ըլլաւ այնպիսի օր մը . . . (ի՞նչո՞ւ), ի՞նչ խոստումներ պիսի ըլեկի՞ . . . : 3. Ինչ որ անձամբ չեմկրնար, կը փութամ գրով . . . : 4. Շնորհաւորութիւնը եւ բարեմաղթութիւնք: 5. Վերջաւորութիւն և ստորագրութիւն: 6. Հասցէ:

29. Կարգապահութիւն

1. Սօֆի որ կարգապահ աղջիկ մ'է, առանց դժուարութեան կրնայ գտնել իւր պիտոյքները դպրոց երթալու միջոցին . . . իւր սենեկին մէջ կարգ կանոն կը տիրէ . . . : 2. Արմենակ որ կարգապահ չէ, գրքերն ու գլուարկը փնտուելով (նկարագրեցէ) ժամանակ կը կորսնցնէ, ուշ կը մնայ դպրոցէն: 3. Եղրակացութիւն:

30. Յափրացած տղան

1. Սեղանի վրայ են. Սւետիս կերակուրներն իւր ձաշակին յարմար չգտներ (նկարագրեցէ): 2. Հօրեղբայրը՝ Գասպար՝ անոր այս թէրութիւնն ուղղելու համար ութ օրի չափ գիւղ կը տանի զայն: 3. Սւետիս չուզեր ուտել ո՛չ մսեղին կերակուրներն եւ ո՛չ բանջարեղիններն Հօրեղբայրն անոր կամքին կը թողու . . . (խօսակցութիւն): 4. Սւետիս անուշեղին կ'ուզէ, Հօրեղբայրը կը մերծէ եւ միայն պատառ մը հաց կուտայ: 5. Յաջորդ օրն Սւետիս ամէն բանի հանիլ կը սկսի:

22. Գտէ հինգական բառ սա մասնիկներով:

1. որդ, 2. ուրդ, 3. ոց, 4. անոց, 5. արան, 6. ստան

31. Խաւած ձուկերը

1. Զարեհ կարմիր ձուկեր ունի զորս կը խնամէ: 2. Ձեռ առաւտօտ մը, որպէս զի ձուկերը չմնին, բղջւկին մէջ տաք չուր կը լեցնէ: 3. Ձուկերը կը մեռնին (նկարագրեցի՞): 4. Յակոր միտքը կը դնէ ուրիշ անդամ խորհուրդ հարցնել իւր մեծերուն:

32. Խամակ առ ընկերուիին

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Նուարդ գիրք մը կը խնդրէ Արաքսին կարդալու համար: 3. Կը խոստանայ մաքուր պահել եւ շուտ ետ դարձնել: 4. Մտերմական խօսքեր վերջաւորութեան և ստորագրութիւն: 5. Հասցէ:

33. Եսաւ եւ Յակոր

1. Իսահակին երկու որդիները: Ինչպէս էին բնութեամբ եւ մարմնով: 2. Եսաւ որսէ կը դառնայ, անօթի է: 3. Ոսպնաթանը՝ անդրանկութեան փոխարէն: 4. Ի՞նչ էր անդրանկութիւնը հին դարերու մէջ:

34. Ի՞նչ կը սովորեցնէ ժամացոյցին փոքրիկ սլաքը

1. Պաղտիկ՝ մօրը ժամացոյցը դիտելով կը զարմանայ որ փոքրիկ սլաքին առաջ երթալը չտեսներ (խօսակցութիւն): 2. Մայրը կ'ըսէ թէ փոքրիկ սլաքն յարատեւութեան դաս մը կուտայ... 3. Անոր դանդաղ ընթացքը կը բազդատէ դպրոցին մէջ Պաղտիկին քիչ քիչ յառաջդիմելուն: 4. Սյու բազդատութեան վրայ օրինակներ կուտայ. բոպէներէն վայրիեաններ եւ ժամեր առաջ կուդան. փոքրիկ դրամներով... (ի՞նչ առաջ կուդայ): Զուրի կաթիներով...

23. Ակերուն տեղ երկրուդականներ դիր: 1. Լաւ ճանչցիր այն մարդն որուն...: 2. Կորեկից եղիր այն մարդուն որուն...: 3. Երշանիկ է այն մարդն որ...: 4. Այնպիսի ունակութիւններ ունիս որոցմէ...: Այնպիսի ունակութիւններ ունիս զորս...: 6. Այնպիսի բարեմասնութիւններ ունիս որք...: 7. Օդտակար չէ այն զործն որով...: 8. Ուտումը որոյ... պիտի հարթէ քու առջեւ կենաց ճամբան:

35. Վարդուիիին աղօթքը

1. Վարդուիի չորս տարեկան է. մայրը կը պատուիրէ անոր աղօթել եւ մեծ մայրիկին երկար կեանք մաղթել: Վարդուիի կ'ուզէ մաղթել որ մեծ մայրը նորէն մատղաշանայ: Մայրը կը պատասխանէ թէ այդ խնդրուածքը չկրնար կատարուիլ (խօսակցութիւն): 2. Վարդուիի կը հարցնէ թէ ի՞նչ է մեռնիլ: Մայրը կը բացատրէ եւ կը հետեւցնէ թէ պէտք է թունիկներն իրենց մեծ մայրն օր ըստ օրէ աւելի սիրեն:

36. Աւակերս մը դասառաւին (նամակ)

1. Տեղ թուական եւ վերնագիր: 2. Զեզ դէմ անվայել վարմունք ունեցայ երէկ (ըսկէ ի՞նչ պարագայթերու մէջ): 3. Ամօթահար եմ... (ցաւ եւ զղում): 4. Ներողութիւն կը հայցեմ եւ կը խոստանամ...: 5. Վերջաւորութիւն: 6. Հասցէ:

37. «Փունջը երկու դամեկան է»

1. Եկեղեցւոյ գուռը կին մը մանիշակ կը ծախէ: Փոքրիկ աղջիկ մը փունջերէն հատ մը կ'առնէ և մէկ դաշեկան կուտայ: 2. Մանիշակավաճառը կոշտ կերպով կ'ըսէ թէ «Հատը երկու դաշեկան է»: 3. Աղջիկը միտքը կը փոխէ եւ քառասուն փարան աղքատի մը կուտայ:

38. Բարեսիրս բժիշկը

1. Գործաւորի մը կինը բժշկին խորհուրդ հարցնել կուտայ: Ճարտար եւ անուանի բժիշկներուն վարձքը սուլ է...: կինն ակնածանօք սեղանին վրայ մէծիտիյէ մը կը դնէ իրը վարձք խորհրդակցութեան: 2. Բժիշկը կը կանչէ զնա. կնոջ կասկածը (ինչո՞ւ): 3. Մէծիտիյէն ետ տալու պատրըւակով բժիշկն անոր չորս ոսկի կուտայ (կինը կը յուզուի):

24. Տրուած ասկանաններուն համապատասխանող բառը գտէ: 1. Մարդ մը որ պարզ կ'քիչ կերպուներով կը բաւականանայ: 2. Կիմայ մը որ ոչ շատ տաք է ոչ ալ շատ ցուրտ: 3. Բան մը որ չշարժիր: 4. Պաշտօնեայ մը որ չողովրդեան համարումը կը փայելէ: 5. Մարդ մը որ ստուկը շատ կը սիրէ: 6. Քաղաք մը որուն վաճառականութիւնը շահաւէտ է: 7. Քաղաք մը որ ծովուն եղերը կառուցուած է: 8. Բերդ մը որ չկրնար առնուիլ: 9. Տեղ մ'ուր դժուար է ելնել: 10. Իրաւունք մը զոր կապտել կարելի չէ:

39. Իսահակի օրհնութիւնը

1. Իսահակ ծերացած : Օրհնութիւն տալ կ'ուզէ եսաւ էն : 2. Ռեբեկայի հնարքը : Յակոբ կ'առնէ օրհնութիւնը :
2. Բարկութիւն եսաւի եւ վրէժինդրութեան որոշում : Յակոբ Միջագետք կը փախչի որպէս զի

40. Կնիքանայր մը իւր սանին (Նամակ)

1. Տեղ, թուական եւ վերնագիր : 2. Կ'ըսէ թէ սանն այցելութեան եկած է իւր տօնին օրն եւ փունջ մը բերած է : Կը ցաւի որ ինք բացակայ գտնուած է եւ չէ կրցած տալ ընծայներն զրոս պատրաստած էր իւր սանին համար (ի՞նչ ընծայներ) : 3. Կը հրաւիրէ այս ինչ օրը նորէն երթալ հանդերձ ընտանեօք եւ հաճոյալի օր մ'անցունել (ի՞նչ զրուանելեր որոշուած են) : 4. Բարեւներ ամբողջ ընտանիքն : Համակրալից վերջաւորութիւն եւ ստորագրութիւն : 5. Հասցէ :

41. Ագռան ու կուժը

1. Ագռաւ մը շատ ծարաւի էր : Կուժ մը կը տեսնէ որուն երեք չորրորդ մասը ջրով լի էր : Կտուցը մէջը կը միէ, բայց չհասնիր : 3. Կտուցով կուժը կոտրել կը փորձէ, բայց չյաջողիր : 3. Կը ջանայ կուժը տապալել — ի զո՞ւր 4. Վերջապէս խիճ կը լեցնէ կուժին մէջ, ջուրը կը բարձրանայ, այն ատեն կրնայ խմել : 5. Բարոյական :

42. Որկրամոլին պատիմը

1. Տրդատ որկրամոլ մ'է : Օր մը տունը մինակ կը մնայ եւ մառանը կը մտնէ խնձոր ուտելու համար : 2. Դուռը կը փակուի հովին : 3. Տրդատ կ'աղաղակէ . քանի մը ժամ ետք, մայրը կուգայ եւ կ'աղատէ : 4. ի՞նչ կ'ըսէ տղուն :

25. Հետեւակ մասնիկներով իինգական բառ զժէ :
1. իկ, 2. ակ, 3. ուկ, 4. ցի, եցի կամ ացի, 5. ցու, 6. երէն,

43. Վաղը

1. Նշան, դպրոցէն արձակուելէ ետք, կը սկսի խաղալ, փոխանակ իւր դասերուն աշխատելու : Մօրը կ'ըսէ թէ ընթրիքէն վերջ պիտի պատրաստէ դասերը (խօսեցուցիք) : 2. Ընթրիքէն վերջ մօրեղբայրը՝ թովմաս էֆէնտի եւ որդին՝ նիկողոս այցի կուգան : Նշան եւ նիկողոս միասին կը խաղան : 3. Միւս առաւոտ Նշան ուշ կ'արթննայ : 4. Դասերը պատրաստ չեն . Նշան կը պատժուի եւ կը ստիպուի կիւրակի օրը տունը մնալ ետ մնացած դասերն ամբողջացընելու համար : 5. Բարոյական :

44. Նամակ առ բժիշկն

1. Տեղ, թուական եւ վերնագիր : 2. Հայր մը կը խընդրէ բժիշկէն գալ տեսնել իւր հիւանդ աղջիկն (լսէք թէ ի՞նչ հիւանդուրենէ բունուած է) : 3. Բժիշկը կարելի եղածին չափ չուտ գալու է : 4. Բարեւներ և ստորագրութիւն : 5. Հասցէ :

45. Թագաւորն ու պանդոկապետն

1. Թագաւոր մը կառքով կը ճամբորդէ . պանդոկ մը կ'իջեւանի ձիերը փոխել տալու համար : Երկու հաւկիթ բերել կուտայ եւ կ'ուտէ : 2. Մեկնելու պահուն մանկլաւիկ մը կուգայ գանդատիլ թէ պանդոկապետը քսան ոսկի կ'ուզէ երկու հաւկիթին համար : 3. Թագաւորը կանչել կուտայ պանդոկապետն և բացատրութիւն կ'ուզէ (խօսեցուցիք) : Պանդոկապետը կ'ըսէ թէ իրաւ որ հաւկիթը հազուագիւտ բան մը չէ, բայց թագաւորներն հազուագիւտ են : 4. Թագաւորը կը վճարէ քսան ոսկին :

46. Յովսէփ գեղեցիկ

1. Յակոբ նահապետ տասներկու որդի ունէր . Յովսէփ ամենէն աւելի կը սիրուէր : Մաղկէ պատմուման : Նախանձ

27. Պայտականները զժէն : 1. Թագաւորը տարուէ տարի գումար մը կ'առնէ իւր հապատկերէն, այդ գումարը կը կրուի . . . կամ . . . : 2. Զինուորները կը ստանեն . . . 3. Թնմի մ'եպիսկոպոսներն կը հաւաքն . . . : 4. Պաշտօնական մ'աշխատութեան փոխարէն կը ստանայ . . . : 5. Ուրիշի մը ստուն բնակելու համար կը վճարենք . . . 6. Բանորները կ'առնեն . . . : 7. Աննը որ ամսակնով կը գրծեն, կը ստանան . . . 8. Խակ անոնք որ տարեկանով վարձեալ են, կը ստանան . . .

եղբայրներուն, մանաւանդ Յովսէիի երկու երազներուն համար: 2. Եղբայրները խաշնարածութեան գացած են, Յովսէի կը զրկուի լուր բերելու: 3. Հոն Խամայէլացի վաճառականներու կը ծախուի: 4. Մաղկեայ պատմունանն արիւնաթաթախ: Սաստիկ վիշտ եւ ողբ Յակոբի:

47. «Ի՞մս է» — «Մի՛րն է»

1. Անենիկ եւ Մաննիկ, երկու փոքրիկ բարեկամունչի, պէտքի մը հետ խաղալ կ'ուզեն. մէկ պէտք միայն կայ որուն համար վէճի կը բռնուին: 2. Պէտքն երկու կտոր Կ'ըլլայ: 3. Երկու աղջիկներ կը զզէան իրենց ըրածին վրայ:

48. Վնարման պայմանաժամն յետաձգելու համար

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Ագարակապան մը կը խնդրէ ագարակատիրոջմէն ներողամիտ ըլլալ անոր համար որ դեռ չէ կրցած վճարել անցեալ տարւոյ վարձքէն մնացած երկու հազար դահնեկանը: 3. Այս յագաղման պատճառներն յառաջ կը բերէ (գտի պատճառները): 4. Կը խնդրէ ագարակատիրոջմէն սպասել մինչեւ որ վաճառուի ընթացիկ տարւոյ հունձքը (լևդայնեցիք): 5. Կանխաւ չնորհակալութիւն կը յայտնէ. յարգանաց ձեւ: 6. Վերջաւորութիւն և ստորագրութիւն: 7. Հասցէ:

49. Էֆէնտիին կօժիկները

1. Էֆէնտիին իւր կօժիկները կ'ուզէ սպասաւորէն: Կօշիկները կը բերուին, բայց ցեխոտ են: Էֆէնտիին դիտողութիւն կ'ընէ, խակ սպասաւորը կը պատասխանէ թէ կէս ժամ վերջ նորէն պիտի աղտոտին (խօսեցուցիք): Էֆէնտիին կօշիկները կը հագնի եւ կը պատրաստուի դուրս ելնելու: 2. Սպասաւորը ճաշարանին բանալին կ'ուզէ կերակուր ուտելու համար: Էֆէնտիին չոտր, սպասաւորին յառաջ բերած պատճառը կրկնելով . . .: 3. Սպասաւորը այս դէպէն:

28. Յարմար բառը գտէք. 1. . . կը կոչուի այն մարդն որ կերպով մը ուրիշն ունեցածը կ'իւրացնէ: 2. . . կը կոչուի այն որ բարպաներէ նեռու զողութիւն կ'ընէ: 3. . . կը կոչուի այն որ ծովու վարդ զողութիւն կ'ընէ: 4. . . կը կոչուի այն որ յարակմածը եւ սպասմածը կը կողովուէ: 5. . . կը կոչուի այն որ արգիլուած բան մը մարսէն կը փափցնէ: 6. . . կը կոչուի այն որ կ'եղծ դրամները կը շնէն: 7. . . կամ . . . այն որ խարելով խարդախնելով զողութիւն կ'ընէ: 8. . . կը կոչուի այն որ փողոցին մէջ ուրիշն բան մը կը շորէէ:

50. Ճշմարտապէս թանկագին խարերը

1. Ստեփան (12 տարեկան) որ մլազացի մը տղայ է, գիւղէն քաղաք եկած միջոցին կը հանդիպի դեռաստի եւ հարուստ տիկնոջ մը, որ ամուսնոյն հետ կը պտտէր: Ստեփան տիկնոջ արդուղարդը տեսնելով կը զմայլի, մանաւանդ թանկագին օղերուն համար: 2. Տիկինը կ'ըսէ թէ այն քարերը շատ սուղ են: Ստեփան կ'ըսէ թէ իւր հօր ջաղացքին քարերը աւելի լաւ են (լեղայնեցիք): 3. Տիկինը գժգոն է, բայց ամուսինն համակարծիք է Ստեփանին:

51. Չիերը

1. Զի մը արտին մէջ արօր կը քաշէ եւ ակօսներ կը բանայ (նկարագրեցիք): 2. Ուրիշ երկու ձիեր, չքեղաղարդ ու սիրուն (նկարագրեցիք), որք մերձակայ մարգագետնին մէջ կ'արածուին, զայն կը ծաղրեն իւր սոսրին աշխատութեանց համար (խօսեցուցիք): 3. Աշխատասէր ձին կը պատասխանէ թէ ինքն է որ վարսակ եւ յարդ կը բռւսցնէ անոնց համար (խօսեցուցիք):

52. Պարտապանէն առ պարտաւէրն (նամակ)

1. Տեղ, թուական եւ վերնագիր: 2. Կը յիշեցնէք թէ քանիցս խոստացած է վճարել պարտքն, սակայն չէ կատարած իւր խոստամութեան սիրոյն համար համբերեցիք ցարդ . . ., սակայն դուք ինքնին դրամական նեղութեան մէջ էք . . . Ուստի չնորհակալ պիտի ըլլաք եթէ անյապաղ վճարէ: 4. Ուրիշ անգամ ալ այսպիսի ծառայութիւններ ընել կը խոստանաք: 5. Վերջաւորութիւն եւ ստորագրութիւն: 6. Հասցէ:

29. Այլեւայլ խումբեր համակարգ բառերը գտէք. 1. Անասուններու, 2. Եզերու, 3. Խոզերու, 4. այծերու, 5. զայլերու եւ շուներու, 6. Ճուկերու, 7. Թուզուններու, 8. աղռաններու, 9. Կռուններու, 10. աստերու, 11. Ժաղիկներու, 12. Խոտի, 13. յարդի, 14. նորի, 15. չորդի, 16. վարդի կենանիներու, 17. զօրերու, 18. տղոց, 19. զիտուններու, 20. ոչխարներու, 21. մարդերու, 22. զուհիկ, մինլերը մարդերու, 23. զողերու՝ խուզդումներու, 24. երեափախաններու՝ պատուիրակներու կամ ուսուցիչներու:

53. Յովսէփի՝ բանտին մէջ

1. Յովսէփի Պետափրէսի հրամանաւ բանտ կը դրուի։
2. Բանտակից մատուռակն ու մատակարարը։ Ասոնց երազ-
ները։ 3. Յովսէփի Աստուծոյ շնորհիւ կը մեկնէ երազներն
եւ կը խնդրէ մատուռակէն։ 4. Յովսէփի մեկնութեան
համեմատ կը կատարուի, բայց մատուռակը կը մոռնայ
Յովսէփը։

54. Անձեւն ու գեղեցիկ օդը

1. Կիւրակի է և օդը բաց։ Տիրուհի և Նարդոս պտայտի
ելնելու վրայ են (նկարագրեցէ)։ Օդին յանկարծական փոփո-
խութիւնը եւ Նարդոսի գժութիւնը։ 2. Տիրուհի,
ընդհակառակն, կուրախանայ վասն զի իւր հայրն որ պար-
ափառն է ծաղիկները ցնցուղով ոռոգելու չպիտի ստիպուի։
3. Բարոյական։

55. Ինչո՞ւ կը սիրեմ գիւղս

1. Մեր գիւղը գեղեցիկ չէ (նկարագրեցէ)։ 2. Սակայն
կը սիրեմ զայն (ինչո՞ւ)։ 3. Գուցէ ստիպուիմ անկէ հեռա-
նալ եւ ուրիշ երկիր մ'երթալ իմ ասլրուստ ճարելու հա-
մար (ինչո՞ւ)։ 4. Կը փափաքիմ նորէն գիւղս դառնալ։

56. Մէկուն հօրը մահուան համար ցաւակցութեան նամակ

1. Տեղ, թուական եւ վերնագիր։ 2. Զեր հօր մահը
ինձ ալ խորին վիշտ պատճառեց։ 3. Կ'արժէ որ լանք
ու կոծենք վասն զի։ (նկարագրեցէ հանգուցելոյն ձիւ-
թերլ), սակայն որչափ ալ լանք։ 4. Հարկ է որ մեղմէք
ձեր վիշտն, քանի որ ընտանեաց անդրանիկ զաւակն ըլլա-
լով։ 5. Զանացէք ուրեմն երկնային միսիթարութեան սապա-
ւինիլ և հանգուցելոյն արժանի յաջորդ։ 6. ընտանեաց հո-
գատարութիւնը։ եւն։ 7. Վատահ եղք բարեկամութեանս
վրայ և ի պահանջել հարկին։ 8. Վշտակցական վերջա-
ւորութիւն և ստորագրութիւն։ 7. Հասցէ։

30. Խօսնե ազդու բնիայող բառեր դրեմ կետերուն տեղ.
ԿՈՅԵՐՆ, ՕՐՀՆԵՒՔԸ. . . ամրու մը վրայ . . . ձերունի մը . . . կը
քայլիր, իւր . . . զաւազանին կրենած։ . . . կը բարձրացնէր իւր . . . ճականն
տեմնելու համար արեւին . . . ճաւազայններն որոցմէ . . . զորկ էին իւր ա-
չերն . . . քայլիրը չէին կարող յանաշանով առանց զաւազանին օգնութեան։
իւր . . . ձեռքերէն որը . . . կրնային վերցնել այդ . . . նեցուկն . . . զորուե-
ցաւ ցուար փոսի մը մէջ եւ մեր ձերունի . . . եւ . . . մասց . . . արայ մը որ
անկէ կ'անցնէր . . . ցատրեց փոսին մէջ և զաւազանն առաւ . . . կոյրին թերաւ
որ զինքն օրննեց ըսելով. . . . զաւակն, վարժք կատար, Աստուած հետոց
ըլլայ . . .

57. Մուրացկանը

1. Նկարագրեցէք ալեւոր եւ կոյր մուրացիկ մը որ իւր
շան վիզը կապ մը կապած՝ կը շրջի։ Մարկոս հաճոյք կը
զգայ կապը կտրելու. կոյրը կը չուարի, կը մնայ։ 2. Մար-
կոսին հայրն որ այս ամէնը տեսեր էր պատուհանէն, կը
ստիպէ զորդին նորէն կապը կապել և մուրացիկէն ներում
կը խնդրէ անոր ավը ոսկի մը դնելով (խատութեամբ խօսե-
ցուցէ որդուոյն իւես եւ յարգանօֆ ծերունոյն իւես)։ 3. Կոյրը
կը ներէ Մարկոսին, իսկ հայրը կը յանդիմանէ (խօսեցու-
ցէ)։ 4. Այս օրէն սկսեալ ի՞նչ կընէ Մարկոս, երբ ծե-
րունուոյն հանդիպի։

58. Մեր ջոււն արեւէն կուգայ

1. Բակին մէջ հոր կը փորեն. Առաքել կը մօտենայ
գործաւորաց պետին եւ կը հարցնէ թէ հորին մէջի ջուրը
ուսկի՞ց պիտի գայ։ Գործաւորաց պետը կը բացատրէ թէ
ջուրը ծովին կուգայ ամպերուն միջոցա։ 2. Առաքել այս
բակին վրայ տեղեկութիւն կ'ուզէ հօրմէն։ Հայրը կը հաս-
տառէ գործաւորապետին ըսածը։ 3. Առաքել կ'առարիէ թէ
ջուրն աղի պէտք է ըլլար։ Հայրը կը բացատրէ թէ ջուրն
ի՞նչպէս կ'անուշնայ։

59. Փարաւոնի երազը

1. Փարաւոնի երազները, Յովսէփի անոր առջեւ կը
մեկնէ երազները — Եօթն երինչներն ու Եօթն հասկերը։
2. Յովսէփի խորհուրդ կուտայ . . . (ի՞նչ ընկելու)։ 3. Փա-
րաւոն անոր իմաստութեան եւ հեռատեսութեան վրայ
զարմանալով, փոխարքայ կը կարգէ։ Ոսկեհուռ հանդերձ-
ներն ու արքունի մատանին։

60. Գեղագործի մը հաւուոյն մէջ եղած սխալն ուղղելու նամար (նամակ)

1. Տեղ թուական եւ վերնագիր։ Գարեգին է Փէնտի կը
գոյէ առ դեղագործն թէ քանան գահնեկանի սխալ մը նշմա-

31. Պատաճի յարաբերականիներ դիր եւ որուէ անոնց հելովնեն.

1. Այս է այն մեծ մարդն — այնքան առաքիսութեաններ զործեց։ 2. Այս է այն
մեծ մարդն — արձան մը կանգնեցին։ 3. Այս է այն մեծ մարդն — կը սարսա-
փին թշնամիները։ 4. Այս է այն մեծ մարդն — զէմ ապերախան զտնուեցան։ 5.
Այս է այն մեծ մարդն — կը պարձի իւր ազգն։ 6. Այս է այն մեծ մարդն —
բարիները վայելցինք։ 7. Այս է այն մեծ մարդն — տեսններ ալ կը յարզեն։ 8.
Պիտի օգտուի՞ն այն զործէն որ — կը զբաղի։ 9. Շահ մի սպասեր այդ անարդ և
անպատի արհեստէն — կը պարագա . . .

բած է անոր զրկած հաշուեցոյցին մէջ։ 3. Գարեգին էֆ վստահ է իւր ըստածին ստուգութեան վրայ, բոլոր դեղագիրներուն պատճէնը պահած է։ Ախալը դեղարանին մէջ պատահած ըլլալու է։ 4. Կը խնդրէ որ գրադերին հետ զրկէ քսան դահեկանը կամ իւր հաշուոյն գրէ։ 5. Վերջաւորութիւն եւ ստորագրութիւն։ 6. Հասցէ։

61. «Եկո՛ւր» եւ «Գնա՛»

1. Արամ հանգուցեալ հօրմէն ժառանգած է բարերեր կալուածք մը։ Հայկ ալ արտ մ'ունի, բայց ամուլ արտ մ'է . . . Արամ կը ստիպուի իւր կալուածին կէսը վաճառելու։ Հայկ զայն գնել կ'ուզէ (խօսակցութիւն)։ 2. Արամ սովորութիւն ունէր ուրիշներուն կատարել տալ իւր գործերը։ միշտ «գնա» կ'ըսէր։ Հայկ անձամբ կը կատարէր, «եկո՛ւր» կ'ըսէր։ 3. Եղրակացութիւն։

62. Պարկետութիւն վարձարեալ

1. Կալուածատէր մը որսի տաեն իւր ագարակապաններէ միոյն արաբին վնաս պատճառած էր։ Ագարակապանը տասն ոսկի կ'ուզէ իւր վնասի հատուցում։ կալուածատէրն որ արդարաւէր մարդ մ'է, նոյն գումարը կը վճարէ։ 2. Կոխոսուած ցորենը կը բռւսնի, հունձքերն յաջող են։ Պարկէստածատէրն կ'ուզէ հատուցանել տասն ոսկին։ 3. Կալուածատէրն զգածուելով գումարը կը կրկնապատէր, խնդրելով որ ընդունի իւր նուէր հարսանեաց ագարակապանին որդւոյն։

63. Առաջին մրցանակ

1. Բաէք թէ ինչո՞ւ երջանիկ էք մրցանակ առնելնուդ համար։ Ի՞նչ պիտի ընէք զայն 2. Նկարագրեցէք գիրքը — կողք, դիրք, գոյն եւն, եւն։ 3. Ի՞նչ համոյք պիտի զգաք անոր պարունակած պատմութիւնները կարդալով — իսկ պատկերները . . . 4. Երեկոյին ձեր ընտանեաց պիտի կարդաք զայն։ 6. Առաջիկայ տարւոյն համար կ'առաջադրէք . . .

32. Յարմար բառը գտէք. 1. Ի՞նչ կը կոչուի այն՝ որ հիւսնորութենէ նոր ելած է։ 2. Այն՝ որ չէ ամուսնացած։ 3. Այն կինն որ ամուսնացած է։ 4. Այն այրը որ ամուսնացած է։ 5. Այն՝ որ բան մը զգար։ 6. Այն՝ որ բանի մը չի հաւատար։ 7. Այն՝ որ չափազնց կը սիրէ իւր կրօնքն։ 8. Այն՝ որ մարդ կը զիսատատէ։ 9. Այն տեղն ուր մարդ կը զիսատատէ։ 10. Այն տեղն ուր թատր կամ տեսարան կը ձեւացնեն։ 11. Այն՝ որ չկշտանար։

64. Նամակ առ ընկերն որ հարսանիքէ բռնուած է 1. Տեղ, թու ական եւ վերնագիր։ 2. Նամակագիրը՝ թուրբէն՝ կը ցաւի լելով որ ընկերն հիւանդացեր է։ — չի կրնար տեսութեան երթալ։ 3. Տեղեկութիւն առած է որ հիւանդացւթիւնը ծանր չէ։ 4. Թուրբէն կը վափաքի զուարձացնել իւր ընկերն նկարագրելով ինչ որ կը պատահի դպրոցին մէջ (ըսկէ պատահածները)։ 5. Պատրաստ էք իրեն գիրքեր փոխ տալու։ 6. Հոգ տարէք ձեր անձին, որպէս զիւ . . .

65. Սնննազանդութիւն

1. Արշակին հայրն որ անտառապահ է, հազար անգամ պատուիրած է անոր՝ չգուշիլ իւր հրացաններուն։ 2. Արշակ այս հրամանին կարեւորութիւն չտալով, օր մը, հրացաններէ մին ձեռք կ'առնէ և կ'ուզէ անով խտղալ։ 3. Հրացանը որ լեցուն էր, ձեռքէն կ'իյնայ։ Գնտակը կ'արձակուի եւ աղջուն ոտքը կը վիրաւորէ։ 4. Յուսահատութիւն եւ վիշտ անտառապահին։ 5. Ցաւ եւ զզջում Արշակին որ, երբ աղէկնայ, մէկ մ'ալ անհնազանդ չպիտի գտնուի։

66. Յովսէփի իւր եղբարց կը յայտնուի

1. Սովը կը տարածուի մինչեւ Քանան։ Յակոր իւր որդիքն եգիպտոս կը զրկէ ցորեն բերելու։ 2. Յովսէփի կը ճանչնայ իւր եղբայրներն (խօսեցուցէ)։ 3. Երկրորդ անգամ կուգան Բենիամինի հետ։ 4. Յովսէփի յուզմունքը՝ հօրը վրայ լուրեր առնելով։ 5. Ցորենի պարկերը, ոսկի բաժակը, «Գողը իմ գերիս պիտի ըլլայ»։ 6. Այլայլութիւն եւ յայտնութիւն Յովսէփի։ 7. Յակոր եգիպտոս կուգայ։

67. Այծին դատասանը

1. Արարացի մը քսակ մ'ոսկի կը կորանցնէ։ — կասկած տնեցիներուն վրայ։ 2. Այծի գատասանը, ծառայներն

32. Սա արմաներէն ծագող բոլոր բառերը գտէք.

Հող, մշակ, սէր, խռով, վարժ, փոփոխ, աչ, զող, դաւ,

ամէնն ալ կարգաւ կուգան փորձին ենթարկուիլ, մինչ Արաբացին վրանին առջեւ կեցած է: 4. Անմեղներն սեւցած ձեռքով կ'երեւան, իսկ գողն որ զգուշացած էր այծին կը նակը շօշափելու, դուրս կ'ենէ . . . (ինչպէս է ձեռիլ): Գող՝ սիրտը դող:

68. Հարսանիքի բռնուած Տիկին պատախան առ Խուրէն

1. Տեղ, թուական և վերնագիր: 2. Շնորհակալութիւն. Նամակը շատ հաճելի թուած է: 3. Հիւանդութիւնը կը նկարագրէ, տենդ, տաքութիւն, ամոքիչ ըմպելիներ: 4. Կրնայ պտտիւ բայց դուրս չելներ: 5. Ռուբէնի պատամածներուն պատասխան: 6. Գիրք մը կ'ուզէ (դրէք գրին անունը): 7. Ռուբէնէն կը խնդրէ որ այս ինչ ժամուն իրենց դռնէն անցնի: Զիրար պիտի բարեւեն: 8. Շատ համակիր վերջաւութիւն եւ ստորագրութիւն: 9. Հասցէ:

69. Գնամանդր

1. Աղքատիկ տղայ մը վաճառականի մը կը ներկայանայ պաշտօն խնդրելու (Ակարագրեցել իւր կերպարանիլ): 2. Գործ չկայ: 3. Մերժեալ տղան տրտում կը դառնայ, բակին մէջ գնտասեղ մը կը տեսնէ և վեր կ'առնէ: 4. Վաճառականը որ պատուհանէն կը նայէր . . . հոգածու տղան կը կանչէ նորէն: 5. Գնամանդր իւեղձ տղուն ապագայն կը չինէ:

70. Ապրելու համար հաց պէսֆ է

1. Թագաւոր մ'իմացաւ որ իւր նախարարներէն մին երկրագործ մը ծեծեր է: 2. Պալատ կը կանչէ զայն և ձաշի վար կը դնէ: Ճոխ սեղան, բայց բնա՛ւ հաց: 4. Նախարարն ապշութեան մէջ է, թագաւորը ներս կը մտնէ (խօսեցուցէ զիրենի): «Բանի որ ապրելու համար հաց պէտք է . . .»:

33. Գոյսկանները գտէք. 1. Գիրք մը շինողն է — կամ — : 2. Գրուած մը մէկ լեզուէ ուրիշ լեզուի վերածողն է — : 3. Խակ այն՝ որ մէկու մը խօսն տարբեր լեզուով կը բացարէ ուրիշ անձի մը կը կոչուի — : 4. Պատմութիւն, աշխարհագրութիւն, գեղեցիկ զիր զրողն է — , — և — : 5. Այն մարզը որ տղայ կը կրթէ. կ'ըսուի — կամ — : 6. Ամէն որ տարուղ թերթ մը որ լուրեր կը պարունակէ — կը կոչուի: 7. Թերթ մը որ պարբերաբար (շարաթական կամ ամսական) կը հրատարակուի, — մ'է: 8. — լրազրի մը պարունակած գրութիւնները կը շարապիրէ: 9. — կը կոչուի զրութիւնն որ կը հրատարակուի լրազրին մէջ: 10. Այն՝ որ երբեմն յօդուած կը գրէ, կը կոչուի — կամ — :

71. Մարմնոյ անդամներուն վէճը

1. Անդամները ձանձրացած՝ իրենց պաշտօնը կատարելէ կը հրաժարին: 2. Ոտք, ձեռք, բերան, աչք, եւն. ամէնքն ալ կը գանգատին, կը տրտնջան (ի՞նչ լսելով): 3. Հետեւանք: 4. Բարոյական:

72. Նամակ առ հօրեղբայրն

Տղայ մը որ իւր հօրեղբօր կողմէ որդեգրուած եւ գիշերօթիկ դպրոց մը դրուած է, տեղեկութիւն կուտայ անոր, իւր վարմանց եւ աշխատութեան մասին:

73. Մովսէսի ազատումը

1. Ամենովկիսի հրամանը — կոտորած նորածին իսրայէլացիներու: 2. Ղեւիի ցեղէն կին մ'իւր որդին նեղուգեալը կը ձգէ պլրտուէ կողովի մը մէջ դրած: 3. Փարաւոնի դուստը կ'ազատէ զայն և կը յանձնէ ստնտուի մը . . . (ո՞յ իւ այդ սենուն): 4. Մովսէս կը կրթուի արքունիքին մէջ: Երբ մեծնալով կ'իմանայ իւր ծագումը . . . 5. Ոճիր եւ փախուստ Մովսէսի:

74. Գասիխարակութիւն

1. Լիգուրկոս օրէնսդիրն: 2. Երկու շուներ կը խնամէ տարբեր եկանակներով, մին փափուկ եւ միւսը խիստ: 3. Հրապարակի մէջ ի փորձ կը հանէ զանոնք. — փափկահամուտեստ եւ նապաստակ: 4. Շուներն իրենց առած վարժութեան համեմատ կը գործեն: 5. Ծափեր: 6. Լիգուրկոս ժողովրդեան դառնալով կ'ըսէ . . .

75. Աչեկապուկով հասուցում

1. Զորա հոգի ճաշարանի մը մէջ: 2. Կերուխումէն ետք ծախուց ցուցակը կը ներկայացուի: 4. «Ես պիտի վճարեմ» կ'ըսէ իւրաքանչիւրը: 4. Կ'որոշուի սպասաւորին աշքը կապեւ եւ չօրսէն որը որ բնա՛ւ . . . Զորսն ալ մէկիկ մէկիկ խոյս կուտան: 5. Ճաշարանապետը ներս կը մտնէ եւ սպասաւորը զայն բանելով «Դուք պիտի վճարէք» կ'ըսէ:

34. Գտէք հինգական բառ սա մասնիկներով.

1. զոյն, 2. զին, 3. ելի, 4. ալի, 5. աւէտ:

76. Նամակ առ ուսուցիչն

Տղայ մ'որուն մայրն հիւանդացեր է, կը գրէ թէ չպիտի կրնայ քանի մ'օր դպրոց գալ:

77. Բաղդատութիւնն

Հսկէ թէ ի՞նչ տարբերութիւն ունին.

1. Ամառն ու ձմեռը: 2. Ցերեկն ու գիշերը: 3. Արթնութիւնն ու քունը: 4. Սրչալոյսն ու վերջալոյսը: 5. Լեռն ու վիճը:

78. Բնուրեան երեխ բազաւորութիւնն

1. Քանի՞ խումբի կը բաժնուին աշխարհի վրայ գրաւուող բաները: 2. Խնչպէ՞ս կ'որոշուին կենդանիք: 3. Իսկ բոյսե՞րը: 4. Իսկ հանածոյնե՞րը:

79. Ուսանող մ'առ իւր եղբայրն

1. Տղայ մ'իւր եղբօրը կը նկարագրէ զրուական պտոյտ մը զոր ըրած է իւր ընկերաց եւ ուսուցչաց հետ:

80. Որդի մ'իւր ծննդաց

Շնորհաւորական նամակ ամանորի առթիւ:

81. Նամակ առ ուսուցիչն

Տղայ մ'որ դպրոցէն վրանուած է, կը պաշտամի առ իւր ուսուցիչն որ հաճի վերընդունիլ զինքն:

82. Նկարագիր անձին

Այս նիւթ կը վերաբերի անձնիւր աշակերտի անձին նկարագրութեան. հասակ, տարիք, գիմագիծք, կազմ եւ այլ ֆիզիքական հանգամանք: Յետոյ պէտք է խօսին իրենց

35. Գտելք բայինքը. 1. Մէկու մը բան մը տալ և փոխարէն ստուկ առնելն է —: 2. Իսկ բան մը տալ առանց փոխարէն բան մ'առնելու — կամ — է: 3. Բանի մը ծանրութիւնն հասկնալու համար կշախի մէջ զնել եւ տրամադրու նետ բարդատելն է —: 4. Մեռելու նոյնին մէջ զնելն է —: 5. Անցեալ դէպր մը կամ անձ մը միտքը բերել՝ կը կոչուի —: 6. Խօսր մը կամ դէպր մը միտք չբերելն է —: 7. Հեռաւոր անձի մը նետ զրաւոր յարսթերութիւն ընելն է —: 8. Զիւռն ոտքը պայտ գամելն է —:

բարոյական հանգամանաց վրայ — բնաւորութիւն, զգացումներ, բարի եւ չար միտումներ, դպրոցական և ընտանեկան վիճակներ, ուսմանց մէջ ունեցած կարողութիւնք, եւն:

83. Գարուն

1. Գարնան արեւը... իւր բարերար ազդեցութիւնն արարածներու վրայ: 2. Մարդիկ նոր կեանք կը ստանան կարծես: 3. Թռչնոց նուազները...: Ամէն անաստունք ուրախութեան ձիչեր կը լսեցնեն..., 4. Ի՞նչ կ'ընեն եւ ի՞նչ-պէս կ'երգեն թռչունները:

84. Ամառ

Հսկէ ի՞նչ կը պատահի ամառը:

85. Աշուն

Հսկէ, ի՞նչ կը պատահի աշունը:

86. Զմեռ

Հսկէ, ի՞նչ կը պատահի ձմեռը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

36. Ի՞նչ կը կրօւելին հետեւեալ կենդանեաց փոքրերը. Այժին, արջին, ապիծին, բաղերն, եղնկին, հասին, ձիուն, իշուն, շան, ոչխարին, խողին, թռչունին, մարդուն, ուղտին:

37. Գտելք ներհակեները. 1. Հպարտութիւն, 2. Կեղծաւորութիւն, 3. Ծուլութիւն, 4. Ազերախտութիւն, 5. Ստութիւն, 6. Վսեմութիւն, 7. Առաստութիւն, 8. Արագութիւն, 9. Վաճառում, 10. Հանում, 11. Զուարթութիւն, Ազգափրութիւն, 12. Բարեկամութիւն:

38. Յարմար բառը գտելք. ի՞նչ կը կոչուի. 1. Յամարին այն մասն որ դաշտերէն շատ վեր բարձրացած է: 2. Բանի մը լիոներ որք իրարու բով շարուած են շղայի պէս: 3. Երկու լիրան մէջտեղը: 4. Այն մարդը որ լիուը կը բնակի: 5. Ընդարձակ տարածութեամբ աղի չուր մը: 6. Ինչ որ ծովու վերաբերել է: 7. Ծովէն կազմուած խորչ: 8. Ծովու վրայ ծրամազող զիւրորական բարձր պաշտօնեաց մը: 9. Ծովու վրայ ասպատակութիւն ընոր: 10. Ծովու մէջ իշնալ կորսուիլ: 11. Ծովու տակին ձգուած հնապարի նել: 12. Ծովի պէս ծաւալած և ընդարձակ:

39. Պոյականենիր գտելք. ի՞նչ կը կոչուի. 1. Այն որ շէնքի մը յասակաղիծը կը պատրաստէ: 2. Այն որ օրականով այդ շէնքին աշխատութիւնները կը կատարէ: 3. Այն որ դրաւորներուն կը հակէ: 4. Այն որ շէնքին իիմը կը զնէ: 5. Այն որ պատերը կը հիւսէ: 6. Այն որ տախտակներ ու գերաններ կը

շինէ : 7. Այն որ չը կ խողովաներն ու ազուգայները կը զետեղէ : 8. Այն որ զբաներն ու պատուհանները կը շինէ : 9. Այն որ կղզաքները կը շինէ : 10. Այն որ ապալիները կ'անցունէ : 11. Այն որ գոներն ու պատերը կը ներկէ :

40. ԳՏԵԼՔ Ի ԲԻՇՎԱԼԻ ԲԱՈ. ԱԱ ՄԱՍԻՒԹԻՆԵՐԱԿ.

1. իջ, 2. ող, 3. աժ, 4. ուն, 5. ունի, 6. անոյշ, 7. պան:

41. Գոյականները գՏԵԼՔ. 1. Նաւու մէջ աշխատող գործաւորները կը կոչուին — : 2. Այն որ նաւուն զիկը կը վարէ — կը կոչուի : 3. Այն որ նաւուն հրամանատարութիւն կ'ընէ — կը կոչուի : 4. Նաւուն զիփի կոլմն է — : 5. Նաւուն երկու կողմերը կը կոչուին — : 6. Նաւուն յատակն է — կամ — : 7. Նաւերը կը շինուին եւ կը նորոգուին — մէջ : 8. — այն տեղն է ուր զարար կ'առնեն նաւերը : 9. Խոկ այն երկամն գոր ծովը կը ճգնն նաւը կեցնելու համար : կը կոչուի — : 10. Նաւերուն մօտենալիք կամ ցամարին դաշելիք տեղն է — : 11. Նաւերուն մէջ տեղ տնկուած սիւնը կը կոչուի — :

42. ԳՏԵԼՔ ԽՈՅԱՆԻԵՑՆԵՐԸ. Հով, պատ, հովանի, սարսուու, յոդ, ուղեւոր, արատ : — Բարակ լի, հատու, սին, տկար, նշանաւոր, խարզախ : — Կշտամիւ, կրւալկել, բշտել, ցնցել, լուլ, ձայնել, պարտասիլ : — Յաճախ, լոկ, մերծ, իսպան, զեռ, շուտով, մերթ, մեկին, խալոյն :

43. Գոյականները գՏԵԼՔ. 1. Թուզուններն իրենց բնակութեան համար կը շինեն — : 2. Վայրի կենանիներու բնակուծ տեղն է — : 3. Ճղնաւորները կ'ապրին — մէջ : 4. Աղքամներն ունին իրենց — : 5. Երեկոյին ոչխարները կը տարուին իրենց — : 6. Զին եւ էջը կ'ապրին — մէջ : 7. Մարդիկ կը բնակին — մէջ : 8. Ամառը կ'երթանը — : 9. Թագուաւորներն ու իշխանները կը բնակին — կամ — մէջ : 10. Կրօնաւորներն իրենց — մէջ կ'առանձնանան : 11. Զինուորները պատերազմի տան — տակ կը պատկին : 12. Մեղուն ունի իւր — : 13. Ոչխարն ունի — կամ — կամ — :

44. Ամբողջացուր աս խօսիեր. 1. Զգուշացէք ցուրտէն ապա թէ ոչ — : 2. Ծառերով զարդարուած են այն պրոդուսիներն ուսկից — : 3. Երախտապարտ ենր մեր ծովաց որոցմէ — : 4. Մեզ համար աշխարհի ամենէն զեղեցիկ երկիրն է այն ուր — : 5. Կը փափարիմ հետզ զալ, սակայն — : 6. Ահա կը պատախաննեմ նամակիդ զոր — : 7. Ճակնդելու արմատ մ'է որով — : 8. Կաթը սննդորար հեղուկ մ'է որով — :

45. Բայերը գՏԵԼՔ. 1. Տղարը ժաղկախտ զերծ պահելու համար անոնց բազուկը նշղակով ճեղքելու եւ մէջը տեսակ մը հիւն ճերարկելու զործողութիւնն է — : 2. Խոկ որթերուն, ծառերուն կեղենները ճեղքել եւ ուրիշ ոստ մը զնելն է — : 3. Պարուն ոչխարներուն բուրզը կորելու զործողութիւնը կը կոչուի — : 4. Ծառերուն աւելորդ եւ անպէտ ճիւղերը կարտելն է — : 5. Ցորեն և այլ արմատիր շտեմարանի մէջ լեցնելն է — : 6. Մարդու մը մօրուն ամելիով՝ վարտալու զործողութիւնը կը կոչուի — : 7. Բարի նպատակի մը համար ասկէ անէլ

ստակ ժողվելն է — : 8. Դրբի մը թերթերն իրարու հետ կարել և վրան կողք անցունելն է — :

46. Զայն նօանակող բառը գՏԵԼՔ. Զէնքերու, չուրի մէջ ինկած բանի մը, անիւներու, տուրերու, գատերու, տերեւներու, խարտոցի, մերենոյի՛ նիզի և ծխնիներու, թնդանօթի, հողեվարի, լեռներու և ժայռերու, բոցի, անձրեւի և ալիքներու, զանգակի, ոտքերու, առուակին, անտառին, սրտին, հողմին, ձեռքի, վտակի, փիճին և անձաւին :

47. Խօսին ազգու ընծայելու համար գիծերուն տեղ պատօսին բառը գՏԵԼՔ. 1. Առաւոտուն — (աժ.) եղները — (մակր.) բաշելով — (աժ.) արօրը՝ (աժ.) ակրաներ կը բանանն — (աժ.) ու (աժ.) խմիլ կը բրբէ (աժ.) հողը : 2. — (աժ.) օղին մէջ կը լսուին թուշուններու — (աժ.) գիզգեզանելով : Այդ — (աժ.) էսկեր — (մակր.) կ'ոստոստին եւ (մակր.) ու (մակր.) կը փնտուն — (աժ.) միշտ մը — (աժ.) ցողուն մը գրս (մակր.) կը ժողվեն և կը տանին իրենց — (աժ.) ձագերուն : 3. Երեկոյին, երբ — (աժ.) մշակը տուն զառնայ, իւր զաւակներ — (մակր.) կը վազեն անոր անջև և հայրն — (մակր.) կը համբուրէ զանոնիր : — (աժ.) ընթրիքէն ետք — (աժ.) մշակը — (մակր.) կը մտնէ անկողին և (մակր.) կը ննչէ :

48. ԳՏԵԼՔ աս բառերուն նօմանածայնները. Դիբը, զուր, ձախ, սար, հօտ, յարկ, կառը, պարկ, զանակ, յամր, ուխտ, բայլ, յամսու, հառաչ, ճանկ, պապակ, թաթառ, որդ, գերի :

49. ԳՏԵԼՔ բայերը. Բ՞նչ կը կոչուին հետեւեալ զործողութիւնները : 1. Թագուէ մը ուրիշ բաղար երթալ, հոն բնակելու համար : 1. Մէկը բռնելու համար ետեւէն վազել : 3. Խօսրով կոռուիլ : 4. Մէկը մեռցնելու համար խորհուրդ ընել : 5. Մէկը մեռցնելու համար վասակար զեղ տալ : 6. Հիւանդ մ'ազեղնեներու զանալ : 7. Մէկուն երեսին հանձնիլ խօսքեր ըսել : 8. Ուրիշներուն սիրտը իրեն դարձնել : 9. Թշնամիին զէմ դնելու համար անոր հետ կռուիլ : 10. Ցուրտէն զողալ :

50. Խօսին ազգու ընծայող բառեր գՏԵԼՔ գիծերուն տեղ.

ՅՈԳՈՂՈՉ

Ցոպովն — (աժ.) և (աժ.) թուչուն մ'է. զլուխը (աժ.) փետուրներով զարդորուած է : — (աժ.) ձայն մ'ունի : — (աժ.) ու (աժ.) անտառներու մէջ կը բնակի (մակր.) եւ ալմուկ չի սիրել (մակր.) : Իւր բոյնը — (աժ.) տերեւններով և մամուռներով կը շինէ : — (աժ.) կոնդերու և — (աժ.) պատերու մէջ, երբ թուխ կը նատի համեմներ կ'ածէ և զրեթէ միշտ — (մակր.) կը պատի Յոպովն — (աժ.) թաշուն մ'է և իւր վայէն — (աժ.) հոտ մը կը բուրէ (մակր.) :

51. Գոյականները գՏԵԼՔ. 1. — զիտութիւն մ'է որ կը սովորեցնէ աշխարհիս զանազան մասերուն տեղն ու անունը, կիմայն ու բերքերը, ցեղերն ու

Եեղոները: 2. — կը սովորեցնէ Թիւերով հաշիւ ընել; 3. — կը հանչցունէ անցեալ ժամանակներու նշանաւոր անձերն ու անցքերը; 4. — կ'ուսուցանէ Հափել աարածութիւնները; 5. — մարմիններուն ֆիզիբական յատկութիւններն ու կրած փոփոխութիւնները կ'ուսուցանէ; 6. — կը խօսի կենդանիներու, բյուրու և հանքերու վրայ; 7. Այն զիտութիւնը որ կը խօսի մարգարիտն մարմայ կազմութեան վրայ, կը կոչուի — ; 8. — կը խօսի ինայելու և հարստանալու միջոցներուն վրայ; 9. — կը հանչցունէ այն օրէնքներն որոց համեմատ կը կառավարուին ազգերը; 10. — կը խօսի կրօնական գեպերու եւ սկզբունքներու վրայ:

52. Մարդ ի՞նչ յատկութիւն ունենալու է.

1. Վտանգի մէջ; 2. Ռւսան մէջ; 3. Կերուխումի մէջ; 4. Մեծերու նկատմամբ; 5. Փոքրերու նկատմամբ; 6. Վշտի մէջ; 7. Հարատութեան մէջ; 8. Յաջողութեան մէջ; 9. Մարմնոյ կրթանոց մէջ; 10. Վարժմանց և խօսակցութեան մէջ; 11. Դժուար ձեռնարկներու մէջ; 12. Զարդարանքի մէջ:

53. Ի՞նչ պարագայի մեջ հետեւեալ բարեմանութիւնները ցոյց տալու է. 1. Խնայողութիւն, 2. համբերութիւն, 3. վեհանձնութիւն, 4. աշխայժ, 5. զգացութիւն, 6. ժումկալութիւն, 7. ողջախունութիւն, 8. յարատութիւն, 9. գաղտնապահութիւն, 10. հաւատարմութիւն, 11. զուարթութիւն, 12. անձնասիրութիւն, 13. արժանապատուութիւն :

54. Ի՞նչ կը կոչուի այն մարդն որ.

Կերակուր (խոն)՝ ծաղ՝ ների՝ բարիք՝ կամք՝ կազմ՝ ժամերզութիւն՝ կեանք՝ հաշտութիւն՝ կտակ՝ ազօթք կ'ընէ կամ կը շնէ: Այն որ վրկութիւն՝ ազատութիւն կուսայ կամ կ'ընէ: Այն որ ձեռքի արագ շարժումներ և խաղեր կ'ընէ:

55. Ի՞նչ կը կոչուին անոնք որ.

Միենոյն հասակը՝ սիրալը՝ հողին՝ զաղափարը՝ ազգը՝ հայրենիքը՝ աշխատութիւնը՝ զործը՝ մասը՝ պաշտօնը՝ խնդրութիւնը՝ ցաւը ունին: Աննը որ իրարու ընկեր են, իրարու նետ կը խօսին, որոց զուռը՝ տունը մօտ է, միևնոյն բնակարանի և սենեակի մէջ կ'ապրին, իրարու նետ դաշն զամ են, որք մրցում, զողութիւն, ազօթք, ուղեւորութիւն կ'ընեն միասին, որք միևնոյն ժամանակի մէջ կ'ապրին:

Ա Ս Ա Զ Ա Գ Ր Ե Ա Ն Ձ

ՅՈՐԻՆԵԱԼՔ Ի ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆԷ

ՊՐԵՂ

- | | | | |
|-----|--|----------------------|----------------|
| 1. | Վարժութիւն Մանկանց, Մասն Ա. | (Ք. <i>sugnqr.</i>) | $3\frac{1}{2}$ |
| 2. | » | (Բ. «) | 5 |
| 3. | » | (Ա. «) | 6 |
| 4. | Տարրական Քերականութիւն | (Բ. «) | 2 |
| 5. | Փունջ հաւաքածոյ | (Բ. «) | 3 |
| 6. | Փօչակ | (պատկերազարդ) (Ա. «) | $1\frac{1}{4}$ |
| 7. | Գործնական բնրացք Շարադրութեան եւ Վայել-
չարանութեան (ըստ ոմայ եւ ոգույ շարադրանու-
թեան հայ լեզուի) դիւրուսոյ եւ տափնանական
յօրինուածով : | | 3 |
| 8. | (Նոյն) Բանակի կամ Ալղեցոյց ի պէտս Գասա-
ռուաց (ընդ մամլով) | | 4 |
| 9. | Ընտելարան հայ լեզուի (ընդ մամլով) | | |
| 10. | Գասարան Հայկազմ Մանկանց (Խրատարակելի) | | |
| 11. | Փունջ հաւաքածոյ Բ. Տարի («) | | |
| 12. | Շարադրութիւն Բ. Տարի («) | | |
| 13. | Քերականութիւն, միջին շրջան («) | | |

Վերոյիշեալ զրեանք քէ՝ Մէարիֆէն եւ քէ
Ազգ. Աւումնական Խորհրդէն վաւերացնալ եւ յանձնա-
րարեալ լինելով՝ կը վահառին զննացուցիչ գեղջով։ Մա-
նաւորապէս դիմել առ Հեղինակին որոյ հասցէն է։

در عليهـهـ بـعـجـهـ قـوـسـنـهـ قـاضـيـعـسـكـرـ خـانـنـهـ سـمـبـادـ دـاـوـدـيـانـ

ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Յանձնակատար - Գործակալ

Պազարիկ խան, Պալյա Պախու, Կ. Պլիս

Անդրամասեղի Զարգարական գրաստան

3502

2097

ՀՀ Ազգային գրադարան



NL0061247

